# * Գառնան Առավոտ

Ալեքս Գրիգորյան, 3-րդ դասարան
Գեղարվեստի կրտսեր դպրոց




* Բարի լուսի զանգեր զարկին
Զրնգզրնգալեն անու~շ, անու~շ.
Լուսը բացվեց մեր աշխարհքին
Ճրղճրղալեն անու~շ, անու~շ:




- Հովտում առուն խոխոջում է
  Գըլգըլալեն անու~շ, անու~շ,
  Քամին բարակ շընկշընկում է
  Զըլզըլալեն անու~շ, անու~շ:




* Կռունկն եկավ երամ կապած
  Կըռկըռալեն անու~շ, անու~շ,
  Կաքավ քարին տաղ է կարդում,
  Կըղկըղալեն անու~շ, անու~շ:




* Հարսն ու աղջիկ հանդերն ելան
Շորորալեն անու~շ, անու~շ,
Ծաղկանց բուրմունքն անմահական,
Սըլսըլալեն անու~շ, անու~շ:

# *ՎԵՐՋ

